

**ՆԿԻՐՎՈՒՄ Է ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆԵՂՅԱՆ 140-
ԵՎ ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆԻ ԾՆԵՂՅԱՆ 95-ԱՍՅԱԿՆԵՐԻՆ**

**ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆ - ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ.
ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ա. Է. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Հովհաննես Թումանյանի մեծությունը անվերապահորեն ընդունում են բոլորը, որովհետև նրա ազդեցությունը չափազանց մեծ է և՛ իր ժամանակակիցների, և՛ հետագա սերունդների վրա: Բավական է միայն հիշել XX դարի հայոց պոեզիայի երեք հսկաների գնահատականները. «Թումանյանը օլիմպիական մեծություն է, անկրկնելի, ունիկում» (Վ. Տերյան), «Թումանյանի պոեզիան է մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը» (Ավ. Իսահակյան), «Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության» (Ե. Չարենց):

Շեշտելով, որ Թումանյանի ստեղծագործությունն անկրկնելի ու անհասանելի բարձունք է, մեր պոեզիայի մեծերը անուղղակիորեն զգուշացնում էին գերծ մնալ նրան մմանակելու անհեռատես ճանապարհից: Այբուհանդերձ, տարբեր տասնամյակներում լույս տեսան «թումանյանական շնչի» բազմաթիվ խեղճուկրակ հատորներ, որոնք, բնականաբար, կյանք չունեցան: Թումանյանն ինքը թեև բնական էր համարում «ազդեցության սանդուղքով» վեր բարձրանալը՝ ասելով. «Չէ՞ որ ամեն գրող ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ իրենից առաջ եղածների համագումար - մեկից շատ, մյուսից քիչ, որ ընդունում, հալում է իր ոգևորության հնոցի մեջ և ձուլում, ձևակերպում իր ճաշակով»¹, - սակայն նա խոսում էր հոգևոր-աշխարհայացքային ազդեցության մասին:

Այն բանաստեղծները, ովքեր կարողացան ճիշտ ընկալել Հովհաննես Թումանյանի իրական մեծությունը, թափանցել նրա գեղագիտության, կենսափիլիսոփայության ու նորարարական մտածողության խորքերը՝ դառնալով նրա ավանդների շարունակողները, ապահովեցին իրենց մնայուն տեղը հայ գրականության մեջ:

Նրանց թվում էր Համո Սահյանը, որը, յուրացնելով ու շարունակելով մեծ բանաստեղծի գրական ավանդույթները, չզնայ ընդօրինակման հեշտ, բայց անհեռանկար ճանապարհով, այլ ընթացավ միանգամայն ինքնուրույն ստեղծագործական ուղիով: Համո Սահյանն ըմբռնեց ու իրապես գնահատեց Թումանյանի մեծությունը: «...Հնարավոր չէ հաղթահարել Թումանյանին... Չարենց դառնալը բացառվում է, բայց Չարենցին հնարավոր է

¹ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. IV, Եր., 1951, էջ 336-337:

հաղթահարել: Մեր պոեզիայի միակ և ամենամեծ օբյեկտիվ բանաստեղծն է Թումանյանը: Նրա ցավն անգամ՝ սուբյեկտիվ ցավը, օբյեկտիվ է: Մնացած բոլորը իրենց հանճարով ու բանաստեղծության զորությամբ կվառեն մեր սրտերը, իսկ Թումանյանը չի վառում, նա ջերմացնում է: Իսկ չէ՞ որ միայն արևն է ջերմացնում...»²:

«Հայոց բանաստեղծության իմ կուռքը Թումանյանն է: Ես նրան կարդում եմ միշտ, գիշեր-ցերեկ»³, - ասում է Հ. Սահյանը և ամբողջ կյանքում էլ չամաչեց խոստովանել, որ միշտ սովորելու բան ունի մեծ բանաստեղծից. «Աշխարհի գրականությանն ու գրողներին շատից-քչից ծանոթ եմ... Բայց ամենից շատ սիրում և ամենից լավ ընկալում եմ Թումանյանին: Ընկալում եմ: Բայց արի ու տես, որ ամեն անգամ նրա ստեղծագործական աշխարհի դուռը բացելիս և ներս մտնելիս, զարմանում ու մոլորվում եմ... Այս որքա՛ն գույներ, համեր, հոտեր, անդունդներ ու գագաթներ կան, որ մինչև հիմա չեմ տեսել»⁴:

Թևակոբ խոսք է դարձել Լ. Հախվերդյանի այն միտքը, թե «Ամեն հասակ իր Թումանյանն ունի»⁵: Հ. Սահյանին Թումանյանն ուղեկցեց ամբողջ կյանքում:

Ուղենիշ ընտրելով Հ. Թումանյանի՝ XX դարասկզբին առաջ քաշած բնաշխարհիկ գրականության տեսությունը, որը մեծապես հարազատ էր իր ստեղծագործական պատկերացումներին, լեզվամտածողությանը, գրողական խառնվածքին, Սահյանը ստեղծեց ինքնատիպ, ոչ որի չնմանվող բանաստեղծական իր աշխարհը: Մի առիթով Սահյանը այսպես է բնորոշել իր բանաստեղծության բնույթը. «Ես ինձ համարում եմ բուն ժողովրդական (Քուչակ - Սայաթ Նովա - Թումանյան) և ոգեղեն (Նարեկացի - Շնորհալի - Չարենց) գծի մեջտեղի բանաստեղծ, ես ձգտել եմ այն բանին, որ այս երկու թևերը իմ մեջ ձուլվեն, խառնվեն իրար... Ես ձգտել եմ ժողովրդական-ֆոլկլորային մտածողությունը դնել մյուս ձևերի մեջ: Բայց, համենայն դեպս, խոստովանեմ, որ ժողովրդական մտածողությունն ինձ ավելի հարազատ է եղել: Դիպուկ, ակնարկով ասված խոսքն այնտեղ ավելի զգալի է»⁶:

Ինչո՞վ են պայմանավորված թումանյանական ստեղծագործական ավանդույթների նկատմամբ սերն ու հարազատության զգացումը, որոնց մասին ամեն պատեհ առիթով խոսում էր Սահյանը: Որո՞նք են գեղարվեստական այն չափանիշները, որ միավորում են տարբեր ժամանակաշրջաններում ստեղծագործած բանաստեղծներին: Ամենակարևորը, կարծում ենք, աշխարհի առարկայական զգացողությունն է, որը հենվում է մի կողմից **բնության գեղագիտության**, մյուս կողմից՝ **ազգային ավանդական մտածողության ու լեզվի ժողովրդական տարերքի** վրա: Ազգային գրավոր և բանավոր ավանդույթների ժառանգորդականությունը երկու բանաստեղծների ստեղծագործության մեջ էլ ակնհայտ է, այն տարբերությամբ, որ

² «Բանաստեղծությունը ծնվում է ցավից», հարցազրույց, վարեց Հակոբ Մովսեսը, «Գարուն», 1984, թիվ 9:

³ Նույն տեղում:

⁴ Հ. Սահյան, Չարմանում ու մոլորվում եմ, «Գրական թերթ», 24. 02. 1989, թիվ 9:

⁵ Լ. Հախվերդյան, Թումանյանի աշխարհը, Եր., 1966, էջ 358:

⁶ «Բանաստեղծությունը ծնվում է ցավից»:

Թումանյանը լեզվի բնականությունից ու մտածողության ժողովրդայնությունից գատ նաև վիթխարի աշխատանք կատարեց ժողովրդական նյութի մշակման ուղղությամբ:

Ըստ Ա. Եղիազարյանի՝ «Թումանյանին օրգանապես հարազատ է ժողովրդական աշխարհագրագոյության տարերային հավասարակշռությունը, ներդաշնակությունը և դրա արտացոլումը խոսքում, բառի մեջ»⁷: Նույնը կարելի է ասել Հ. Սահյանի մասին: Թումանյանի բառը միտված է *նյութականությանը*. անհատական-զգացմունքայինը երբեք չի գերազանցում բառի նյութական իմաստին: Նույնախիսին է Սահյանի բառը, որը ձգտում է պատկերի պարզության, առարկայական տեսանելիության: «Պոեզիան ինձ համար միշտ էլ առարկայականն է, իրականը...»⁸, - ասում է նա: Ի հավաստումն ասվածի՝ բերենք քառատողի մեկական օրինակ.

Հովհաննես Թումանյան

Համո Սահյան

**Օրերս անպտուղ, տխուր, ձանձրալի,
Ու գնում եմ ես ունայն տրտունջով
Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի
Քերեզմանների շարքերի միջով:**

**Նորից կարմիր ու կանաչ
Իմ երազները
Քաց են արել մեր հին տան
Հին դարպասները:**

«Տրտունջ»

«Նորից...»

Թումանյանի քառատողում պատկերի նյութականությունը ոչ մի կերպ չի թուլանում *անպտուղ, տխուր, ձանձրալի, ունայն, լավ* մակդիրներից ու ուրույններից, որովհետև բանաստեղծը սրանցում ևս ավելի շատ ընդգծում է նյութական-առարկայական, քան զգացմունքային-անառարկայական իմաստները: Նույն կերպ նյութական շարժումն է Սահյանի քառատողի հիմքը, իսկ *կարմիր ու կանաչ, հին* մակդիրներն առավելապես կրում են բանաստեղծի առարկայական վերաբերմունքը: Հատկանշական է, որ երկուսի բանարվեստում էլ մակդիրը պատկերավորման միջոցների շարքում համեստ տեղ ունի: Սա ևս վկայում է, որ երկու բանաստեղծների ստեղծագործություններն արմատներով կապվում են հայ միջնադարյան ժողովրդական-բանահյուսական քնարերգության հետ, որտեղ պատկերավորման հիմնական միջոցները համեմատությունն ու փոխաբերությունն են, որոնք ավելի հակված են շեշտելու բառի նյութականությունը:

Ի դեպ, ժողովրդական բանարվեստի ամենաբնորոշ արտահայտություններից մեկը *փոխաբերականությունն* է, որը միջնադարյան հայ բանաստեղծների համար արդյունավետ միջոց էր խուսափելու կրոնական, քաղաքական և այլ սահմանափակումներից: Փոխաբերականացումը կատարվում է մարդու և բնության, ինչպես նաև բնության տարբեր էակների, երևույթների, առարկաների արտաքին ու ներքին ընդհանրությունների վերհանմամբ, հատկանիշների փոխատեղմամբ: Անցյալ դարասկզբին Թումանյանը հաճախ էր դիմում այս միջոցին, իսկ Հ. Սահյանի բանարվեստն ամբողջությամբ խարսխվում է փոխաբերական մտածողության վրա.

⁷ Ա. Եղիազարյան, Բառի բովանդակությունը գեղարվեստական խոսքում, «Մովետահայ գրականության պոետիկան», հոդվածների ժողովածու, Եր., 1980, էջ 126:

⁸ «Խոսքը ատոմից ուժեղ է», հարցազրույց, «Մովետական Հայաստան», 24.04.1987, թիվ 99:

Հովհաննես Թումանյան

Վաղուց թողած բարձր ու կանաչ
 Գահը իրենց հանգստության,
 Երկու սև ամպ, հողմի առաջ
 Գնում էին հալածական:

«Երկու սև ամպ»

Համո Սահյան

Ամպը հառաչում էր լեռան լանջին,
 Գողում, սարսռում էր հասակով մեկ:
 Գալիս, փաթաթվում էր վեցկու մաճին,
 Հետո թավալվում էր ակոսի մեջ:

«Ամպը»

Ուշագրավ է Սահյանի վերաբերմունքը *բարբառային և խոսակցական բառերի* նկատմամբ, որոնք գեղարվեստական միջավայրի ազգային դրոշմը կրող, խոսքին համ ու հոտ հաղորդող միավորներ են: Հիշենք, որ XX դարասկզբին, ի պաշտպանություն բարբառային ու ժողովրդական մյուս բառագանձերի, եռանդուն պայքարում էր Հ. Թումանյանը⁹: «Ինձ երբեմն հանդիմանում են (հիմնականում բանավոր), որ ես հավատարիմ եմ մնում մեր ազգային պոեզիայի ավանդներին, որ իմ բանաստեղծություններից ժողովրդական բանահյուսության հոտ է գալիս: Իսկ ես դրա մեջ ոչ մի վատ բան չեմ տեսնում»¹⁰, - ասում է Հ. Սահյանը: Անշուշտ, բանաստեղծը գիտակցում է, որ այդ բառաշերտի միջոցով մաս փոխանցվում են ազգի գեներտիկ հիշողությունն ու սովորության-ավանդության բազմահազարամյա համալիրի ամենակենսունակ միավորները: Սահյանը հրաշալի գիտի բառի այն սահմանը, որից հետո սկսվում են հնամոլությունն ու բարբառամոլությունը: Երբ նա ասում է՝ «բացում եմ մախաղը հացի», անմիջապես մեզ է պատկերանում անցյալ դարասկզբի գյուղական անպաճույճ միջավայրը: Բողոքովին այլ կլինե՞ր ընթերցողի ընկալումը, եթե, օրինակ, մախաղի փոխարեն լինե՞ր *հացի տոպրակը*. սա բանաստեղծությունից ոչ բանաստեղծություն ամենակարճ ուղին է:

Այս համապատկերում միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու են երկուսն էլ իրենց ոճը մերձեցնում է գրույցի, առօրյա խոսակցության: Եվ դա անում են անկրկնելի գեղեցկությամբ ու գեղագիտական անթերի ճաշակով: Այսպես, Թումանյանի «Հառաչանք» պոեմի ծերունու՝ քաղաքից եկած հյուրի հետ գրույցը գրեթե ամբողջովին կազմված է դարձվածքներից, թևավոր խոսքերից ու ժողովրդախոսակցական ոճին բնորոշ արտահայտություններից: Բերենք դրանցից մի քանիսը՝ «Մեր ապրուստն ի՞նչ է,- մի կտոր չոր հաց, էն էլ հըրեն հա՛ - երկնքից կախված», «Աչքդ թեքեցիր -բանիդ տերը չես», «Համեցե՛ք դիվան ուզիր սրանից», «Դարձել է աշխարհքն, ախպեր, առ ու փախ» և այլն:

Սահյանի բանաստեղծության մեջ միջավայրի անմիջականությունն ու կոլորիտը ապահովող միավորների մեջ ևս առատ են դարձվածքները, թևավոր խոսքերը, ժողովրդախոսակցական բառերը՝ «կանչեց մութի ականջը» («Ճայթեց...»), «օրդ սև արին, սև արին տարիդ» («Քարին տարեկից»), «մենք ծովի վրա մատ ենք թափ տալիս» («Բարձրության ահից»), «ծաղիկը, թուխս է նստել, աչքդ լույս, տերև» («Ծաղիկը») և այլն:

⁹ Տե՛ս Լ. Հախվերդյան, Ժամանակի հետ, Եր., 1976, էջ 37-50:

¹⁰ «Պոեզիան կօզնի մարդուն», հարցազրույց, վարեց Լևոն Սկրոչյանը, «Գրական թերթ», 28.04.1972, թիվ 18:

Այսուհանդերձ, երկու բանաստեղծներն էլ հրաշալի հասկանում են, որ էականը ոչ թե բանաստեղծական խոսքում ժողովրդական լեզվի տարրերի առատությունն է, այլ այն, որ «ժողովրդային է հենց հեղինակային խոսքի ակունքը՝ լեզվամտածողությունը՝ արտահայտվելու ձևը, խոսելակերպը»¹¹: Բացի այդ, ինչպես Թումանյանի, այնպես էլ Սահյանի համար *լեզվի ժողովրդայնությունը գեղագիտական կարևոր խնդիր է*, քանի որ, մարդու և բնության ներդաշնակ համակեցության գաղափարախոս լինելով, նրանք մարդու լեզուն ու մտածողությունն էլ մերձեցնում են բնությանն ու բնականությանը:

Կերպարաստեղծման ժամանակ նույնպես և՛ Թումանյանի, և՛ Սահյանի բառի մեջ զգացվում է ժողովրդի աշխարհաճանաչողական ու գնահատողական վերաբերմունքը: Դրանով է հենց պայմանավորված Սահյանի խոստովանությունը. «Թումանյանի հերոսներն ինձ այնքան են մոտ ու հարազատ, այնքան արյունակից, որ նրանց ուրախությունն ու տառապանքը, նրանց փորձն ու փորձանքը, մինչև անգամ նրանց մահը դարձել են իմ կենսագրության վավերական բաղադրիչները»¹²: Երկու բանաստեղծները հոգեբանական խոր ընդհանրացումներով ներկայացնում են կերպարի արտաքին կամ ներքին ամենաբնութագրական հատկանիշները, որից հետո հոգեբանական լրացուցիչ ներսուզումների անհրաժեշտություն չի զգացվում: Այդպիսին է ժողովրդական խոսքը. մեկ իմաստալից բառը, սեղմ ու դիպուկ բնորոշումն ընդհանրացնում է կերպարի (մարդ, կենդանի, առարկա, երևույթ և այլն) ամբողջական նկարագիրը, օրինակներ.

Հովհաննես Թումանյան

**Տաղով եկավ,
Ախով գնաց Սայաթ-Նովան.
Երգով եկավ,
Վերքով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով եկավ,
Սրով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով մնաց Սայաթ-Նովան:
«Տաղով եկավ»**

Համո Սահյան

**Հող ու ջուր չեմ ուզում ձեզնից,
Երեսիս հողով մի տվեք,
Ճյուղերս մի տարեք շուկա,
Ծաղիկս փողով մի տվեք:
Սովերս քաշեք ձեզ վրա,
Նստեցեք, հով անեմ շոգին,
Մրգերս քաղեցեք մեկ-մեկ,
Տնկողիս ողորմի տվեք:
«Ողորմի տվեք»**

Թումանյանի ու Սահյանի հերոսները ծնվել ու հոգևոր սնունդ են ստացել պատկերվող բնաշխարհում: Նրանք ամբողջովին կրում են այդ բնաշխարհի դրոշմը, բնավորությունը, մտածողությունը և հակառակը՝ բնությունը ևս կրում է այդ հերոսների հոգեբանության ու խառնվածքի յուրահատուկ գծերը: Ասել է թե՛ բանաստեղծները իրենց կենսագրության ու ապրած կյանքի նվիրական էջերն են բացում ընթերցողի առջև և, բնականաբար, շատ հաճախ նրանք չափազանց ցավագին են վերապրում մանկության աշխարհի կորուստը: Ահա Թումանյանի «Պատրանքը» բանաստեղծությունը.

¹¹ Ռ. Իշխանյան, Բակունցի լեզվական արվեստը, Եր., 1965, էջ 124:
¹² Հ. Սահյան, Չարմանում ու մոլորվում եմ:

**Վեր է կացել էն սարում
Մեր Չալանկը իր թևից.
Գնում է մութ անտառում
Քաջ ախպերս ետևից:**

**Չրնգում են նրանք խոր
Էն անտառում կուսական.
Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թվում է, թե կգան...**

**Չո՛ւր... վաղուց են, ա՛խ, նրանք
Մեր սարերից գնացել.
Էն զիլ ձեներն են մենակ
Իմ ականջում մնացել...**

Սահյանը Թումանյանի «Պատրանքը» բանաստեղծությունը համարում է «աշխարհի ծով պոեզիայի մեջ» իր ամենասիրելին. «...Պարզ ու փոքրիկ գրույցի մեջ կա մարդկային բարդ ճակատագրի մի մեծ պատմություն, մի ամբողջ աշխարհի նկարագիր իր սովորություններով, կուսական մի աշխարհի կորուստ, կորուստի անհուն մի ցավ, ափսոսանք ու կսկիծ... Վիպական մի ամբողջ պատում կա այս փոքրիկ գրույցի ենթատեքստում»¹³: Իբրև գեղարվեստական պատկերման միջոց կիրառելով վերհուշը՝ երկու բանաստեղծներն էլ մարդկային անխաթար հոգեվիճակին վերադառնալու, կեցության զուլալ ակունքներին հարաբերվելու իրենց գեղագիտական պահանջմունքն են բավարարում:

Լինելով բնաշխարհիկ քնարերգության գեղագետներ, որի ամենահիմնային խնդիրը մարդու և բնության միասնականությունն է, երկու բանաստեղծներն էլ ստեղծում են մարդու և բնության հատկանիշների փոխատեղման այնպիսի կառուցվածք, երբ բնության երանգները փոխանցվում են մարդուն, իսկ բնության առարկաները ձեռք են բերում մարդկային գծեր: «Աշխարհն իմ մեջ, ես՝ աշխարհի»։ սա է սահյանական աշխարհագրագրության կարգախոսը: Այս առումով Սահյանը աներկբայորեն շարունակում է բնապատկերի կերտման թումանյանական ավանդույթները, քանի որ ցանկացած բնանկար անկենդան կլինի, եթե զուրկ լինի հուզական-զգացական լիցքից, որը ինչպես Թումանյանի, այնպես էլ Սահյանի բանաստեղծություններում, դրսևորվում է գեղարվեստական պատկերի ներքին, ենթատեքստային, հոգեբանական ծալքերում: Այս դեպքում իրերն ունենում են մարդկայնացված վերաբերմունք և բնանկարը ստանում է *հոգեբանական* իմաստ:

Հ. Թումանյանի «Համերգը» բանաստեղծության մասին Հրանտ Թամրազյանն ասում է, որ բանաստեղծը ձգտել է շնչավորել բնության պատկերը, անձնավորել, հոգի ներշնչել երևույթներին. «Այս փոքրիկ պատկերը, բնական, ֆիզիկական երևույթի այս հարազատ ընկալումն ունի նաև խոհական կշիռ, քանի որ մեծ բնության անձնավորումը զուգահեռ է ծնում նաև կյանքի հետ: Առանց հոգեկան աղերսի բնության պատկերը կարող է ունենալ միայն ֆիզիկական նկարագրության արժեք, որը չի կարող հնչել որպես ճշմարիտ բանաստեղծություն»¹⁴:

¹³ Հ. Սահյան, Իսկականն ու կեղծը, «Գրական թերթ», 11.10.1963, թիվ 41:

¹⁴ Հր. Թամրազյան, Հովհաննես Թումանյան, բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 453:

Ինչպես ժողովրդական երգերում, շատ հաճախ և՛ Թումանյանի, և՛ Սահյանի ոտանավորի հոգեբանական և փիլիսոփայական շերտերը փոխներթափանցված են այն աստիճան, որ իրարից զատել դրանք պարզապես իմաստ չունի, մանավանդ որ դրանով ուժեղանում է հուզապրումը, ավելի է շեշտվում բառի բազմախորհուրդ էությունն ու նշանակությունը:

Բնությունը Թումանյանի անտես միջամտությամբ ապրում ու շնչում է ինքնուրույն:

**Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:
«Լռեցի Սարն»**

Այդպիսին է և Հ. Սահյանի բնությունը. բանաստեղծի ներկայությունը գրեթե չի նկատվում բնության շարժման մեջ:

**Մասրենու քեից արյուն է կաթում,
Եվ սարսռում է սովերը նրա...
Տեսնում է անտառն ու չի նկատում
Սովերի սարսուռն իր սրտի վրա:
«Տերևի քիթը»**

Ուշագրավ է, որ քնարական փոքր բանաստեղծության ժանրին նախապատվություն տալը ևս Սահյանը պայմանավորում է իր հոգևոր ուսուցչից ազդված լինելով. «Աշխարհի բոլոր լավագույն բանաստեղծություններն ինձ համար մեծ վեպերի առաջաբաններ են: Կարդում ես բանաստեղծությունը և մտքով շարունակում այն վեպը, որ պիտի գրեր հեղինակը: Թումանյանի մոտ հակառակն է: Բանաստեղծությունը վեպի ամփոփագիրն է»¹⁵: Այսինքն՝ փոքր ծավալի մեջ առկա է ասելիքի առավելագույն ընդգրկում, խտացում: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ Սահյանը քնարական փոքր բանաստեղծությունների մեջ կարողանում է ընդգրկել էպիկական մեծ բովանդակություն, անվանելով դրանք «Պոեմ», «Վեպ», «Վիպակ» և այլն: Օրինակ՝ «Պոեմ» բանաստեղծությունն ունի ընդամենը 16 տող, «Վեպը»՝ 34 տող, իսկ «Վիպակը»՝ 29:

Հ. Սահյանին և Հ. Թումանյանին բնորոշ մյուս էական ընդհանրությունը *խոհականությունն է*: Մարդու և բնության հարաբերակցության բանաստեղծական դիտարկումները անխուսափելիորեն հանգեցնում են տիեզերական հավերժության ու մարդկային վաղանցուկ կյանքի մասին մտորումների: Թումանյանը բնության մշտահուլով կյանքի հետ հաղորդակցման և միավորման մեջ է տեսնում մարդու անմահության միակ ուղին¹⁶: Մարդը ծնվում է բնությունից և մահանալով վերադառնում բնության գիրկը՝ դառնալով նրա հավերժական գոյության մի մասը: Մեծ բանաստեղծը այս հայեցակերպը խտացրել է իր բազմաթիվ բանաստեղծություններում («Վայրէջք», «Բարձրից»), պոեմներում («Թմկաբերդի առումը», «Դեպի անհունը»),

¹⁵ Հ. Սահյան, Չարմանում ու մոլորվում եմ:

¹⁶ Էդ. Չրբաշյան, Թումանյանի պոեմները, Եր., 1986, էջ 512:

բալլադներում («Փարվանա», «Լուսավորչի կանթեղը») և հատկապես սքանչելի քառյակներում: Վերջիններում նա ոչ միայն արտահայտում է մարդու և բնության միասնականությունը, այլև բացահայտում տիեզերքի աստվածաստեղծ էությունն ու նրա անկործանելիությունը.

**Աստեղային երազների աշխարհներում լուսակաթ,
Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ,
Անհիշելի վերհուշերի մշուշներում նրբադոս՝
Երբեմն, ասես, զգում եմ ես, թե կհասնեմ Նրա մոտ...**

Սահյանի պոեզիայում ևս մարդու և տիեզերքի փոխառնչությունների խոհական ընկալումները դրսևորվեցին թումանյանական ավանդույթների ոգով: Ծնվելով բնությունից՝ մարդը վերադառնում է մայր հող՝ իր մահով գոյի նոր որակների ծնունդ տալով.

**Ծիլ ենք տալիս հողից
Եվ սնվում ենք, աշխարհ, մենք քո հողով...
Մանկանում ենք նորից, մանկանում ենք
Ու գնում ենք նորից դեպի հողը:**

«Ծիլ ենք տալիս...»

XX դարի համաշխարհային գրականության մեջ առաջին պլան մղվեցին մարդու ինքնատարման, ինքնաորոնման, շրջապատող ամեն ինչի նկատմամբ անտարբերության և բարոյական ու հոգեբանական այլ հիմնահարցեր: Այս համապատկերում Սահյանը հրաշալի հասկանում էր, որ կեցության բնականոն ընթացքը պայմանավորող մարդու՝ ինքնահաշտեցման և աշխարհի հետ հաշտության եզրեր գտնելու, ինքնակատարելագործվելու գիտակցությունը, կամքն ու ճիգն են: Հետևաբար նա տիեզերքի հավերժական շարժումը հանգեցնում էր մարդու և բնության ներդաշնակ համակեցությանը: Տիեզերքի անվախճանության գեղագիտական հայեցակարգը Սահյանը մեկնում է իր գեղագիտական իդեալի դիրքերից՝ «Կյանքս վայրկյան է քո դարերի մեջ» («Կյանքս»), ուստի և նրա ամբողջ ստեղծագործության մեջ դրսևորվում է ձգտումը նեղ, սահմանափակ տարածքից դեպի լայնարձակություն, քաղաքային անձուկ ու խիտ միջավայրից դեպի բնաշխարհի խորքերը, մարդկային մանր մտածումներից դեպի լայնախոհությունը, դեպի մաքուր զգացմունքներն ու հոգեվիճակները, դեպի աստվածայինը:

Մի հարցազրույցում, անդրադառնալով Թումանյանի վերաբերմունքին կեցության, գոյի խնդիրներին, Սահյանը ասում է. «Հիշեցի Թումանյանի բանաստեղծությունը՝ «Բարձրից»: Մեր մեծերի մեծը վերևից նայել է: Արևի պես է նայել: Վերևից Աստված է նայում: Մենք էլ ենք ասում, մեր ներքևից նույն բանն ենք ասում՝ բոլոր ժամանակներում էլ էսպես է եղել, հավիտյանս հավիտենից կովի մեջ են լույսն ու խավարը: Ազգերը կերել են իրար, մարդը կերել է մարդուն: Միտքը, սակայն, կատարյալ է Թումանյանի մոտ: Գառը ճշմարտություն է ասում, դաժան բան, բայց հոգուդ խաղաղություն է իջեցնում: Գրելու թիվն էլ հիշենք՝ 1915»¹⁷: Իրերին ու երևույթներին

¹⁷ Հարություն Հովնաթան, Գերված մի արծիվ, հարցազրույց, «Խորհրդային Հայաստան», 25 մարտի, 1990, թիվ 69:

«վերևից», «բարձրից» նայելու խոհափիլիսոփայական այս հայեցակերպը որպես պատգամ է ընդունել Սահյանը.

**Եվ թռչում եմ արթուն, թեթև, թեթև,
Ինչ-որ անիրական լեռան ետև,
Անհայտ անդունդների վերևներում
Տիեզերքի բոլոր բևեռներում...**

«Թռիչք»

Պահի ու հավերժականի շուրջ մտորումները ակներև են դարձնում Սահյանի ու Թումանյանի սկզբունքային ևս մեկ ընդհանրությունը: Նրանց բանաստեղծական համակարգերում գեղագիտական ու կառուցվածքային կարևոր դեր են կատարում ժամանակը և տարածությունը: Մի կողմից դրանք գեղարվեստական պատկերավորություն ապահովող էական գործոններ են, մյուս կողմից, ժամանակի և տարածության գեղագիտական ընկալումը հնարավորություն է տվել բանաստեղծներին և՛ ժամանակը, և՛ տարածությունը շնչավորելու, օժտելու զգացմունքներով, բնավորությամբ, փոխաստեղելու դրանց հատկանիշները: Դուրս գալով ժամանակատարածական սահմանների որոշակիությունից՝ նրանք ընդլայնել են քրոնոտոպի¹⁸ ընդգրկումը՝ վերջնականորեն հասնելով գեղարվեստական կամ «փոխալական» ժամանակի ու տարածության տիրույթներին: Սակայն ժամանակատարածական պայմանականությամբ հանդերձ՝ նրանց չի լքում ժամանակի ու տարածության առարկայական զգացողությունը:

Հովհաննես Թումանյան

**Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ,
Ես եղել եմ, կա՛մ, կլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:**

Համո Սահյան

**Իմ անակնկալ ծննդյան օրից
մինչև ակնթարթն այս գուշակելի
Քանի եռիլիոն
Շնչավորներ են եկել-գնացել:
Թե ամեն մեկի
Ապրած տարիներն առնեմ, գումարեմ,
Կանի հինգ հազար հավիտենություն:**

Վերջապես, ընդհանրություններ ունեն Հովհաննես Թումանյանի և Համո Սահյանի չափական համակարգերը: Դրանք ամբողջովին հիմնվում են ավանդական բանաստեղծական կառուցվածքների վրա, որոնց բնորոշ են նաև ժողովրդական ստեղծագործությունների պարզ ու անպաճույճ ձևերը՝ *երգեցիկությունը, հուզականությունը, կշռույթի ու հնչերանգի ներդաշնակությունը, բանաստեղծական կանոնավոր ձևերը, կրկներգերի ու կրկնաբանների առատությունը, դասական հանգավորումը* ևն:

¹⁸ Տե՛ս **М. Бахтин**, Вопросы теории и поэтики, СПб., 1984:

Սահյանը, առավել քան որևէ մեկը, հրաշալի է ձևակերպել իր բանաստեղծության ձևի ու բովանդակության բնույթը.

**Մտերիմ շունչն իմ երգի՝
Մորս ծոցից եմ բերել.
Անշուք շինվածքը՝ մեր հին
Տուն-ամբոցից եմ բերել:**

«Մտերիմ...»

Սակայն տաղաչափական ձևերի արտաքին պարզությունն ու միօրինակությունը փոխհատուցվում են բանաստեղծական ձևերի ներքին բազմազանությամբ ու հարստությամբ:

Ե՛վ Թումանյանի, և՛ Սահյանի բանաստեղծությունները բնույթով վանկային են: Երկու բանաստեղծներն էլ առավելապես գրել են հավասար կամ համանման տողերով բանաստեղծություններ, ինչը բնական է ձևային կանոնավոր ու համաչափ սկզբունքներով առաջնորդվող պոետների համար:

Սահյանի պոեզիայում ամենամեծ գործածությունն ունի 10-վանկանի տողաչափը: Այս տողաչափն է նախընտրել նաև Թումանյանը: Առհասարակ, 10-վանկանի տողաչափը անվիճելի առաջատար է հայ դասական քնարերգության մեջ:

Հովհաննես Թումանյան

Համո Սահյան

**Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց
Երկար դարերով, ահեղ հարվածով:**

**Ծանր նստել է քարափը ձորում,
Հյուրընկալ տերը մանկության ձորի:**

«Թեպետև...»

«Քարափը»

Այնքերևաբար համընկնում են նաև երկու բանաստեղծների բանաստեղծական տան կառուցման նախասիրությունները: Մասնավորապես, քառատողը բանատան ամենատարածված ձևն է և՛ Հ. Սահյանի, և՛ Հ. Թումանյանի չափածոյում. քառատող տներով է գրված Հ. Թումանյանի բանաստեղծությունների 78.5 %-ը (չհաշված պոեմներն ու բալլադները)¹⁹: Սահյանի կանոնավոր տներով բանաստեղծությունների ճնշող մեծամասնությունը ևս (շուրջ 80 %) գրված է քառատողերով²⁰: Ավելորդ չէ նշել, որ քառատողը լավագույնս ծառայում է տողերի միջև համաչափություն պահպանելու խնդրին:

Հովհաննես Թումանյան

Համո Սահյան

**Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին:**

«Հայոց վիշտը»

**Մամուռներում կորան
Արահետ ու անուն,
Էլ խնկահոտ երկինք
Ու շաղոտ հող չունեմ:**

«Մամուռներում...»

¹⁹ Տե՛ս **Էդ. Չրբաշյան**, Պոետիկայի հարցեր, Եր., 1976, էջ 355:

²⁰ Տե՛ս **Ա. Հովակիմյան**, Համո Սահյան. պոետիկայի հարցեր, Եր., 2008, էջ 150-154:

Ուշագրավ է, որ հավասարատող տներ ունեցող բանաստեղծությունների հաջորդ համեմատաբար մեծ խումբը քառատողերից հետո երկու բանաստեղծների չափածոյում էլ կազմում են վեցտողանիները²¹: Օրինակ՝

Համո Սահյան

**Ես եկել եմ այն աշխարհից,
Ուր ամեն մի սար ու քարից
Քարե գետ է հոսում,
Ուր բերդն է վիհ ու վիհը՝ բերդ,
Ուր ժայռերը ժայռերի հետ
Աչք-ունքով են խոսում:**

«Այն աշխարհից»

Հովհաննես Թումանյան

**Ելած՝ օվկիանի անգուսպ ալիքներ,
Ծանր հորձանքով զարկելով դեպ վեր,
Լեռնանում էին, գոռալով ահեղ,
Եվ մրրիկն ուժգին շնչում էր այնտեղ
Անեզր ու անվերջ
Տարածության մեջ:**

«Այվազովսկու նկարի առջև»

Այսպիսով, գեղագիտական ու գեղարվեստական բազմաթիվ ընդհանրություններ կան Հ. Թումանյանի և Հ. Սահյանի բանաստեղծական համակարգերի միջև: Սահյանի և Թումանյանի գեղարվեստական համակարգերի համար ընդհանրական են հետևյալ չափանիշները՝ ժողովրդական կենսագագողության անմիջականություն, անկեղծություն, միջավայրին համապատասխան բնական լեզու, փոքր ձևի մեջ ազգային ու համամարդկային մեծ բովանդակություն և ինքնատիպ, ներքին խոհական խորքով օժտված մտածողություն: Սրանից զատ՝ ակնառու են կերպարաստեղծման, լեզվամտածողության, աշխարհայացքային ընդհանրությունները, չափական համակարգերի կառուցման համանման սկզբունքները և այլն:

А. Е. ОВАКИМЯН — *Амо Сагиян в творческих связях с Ованесом Туманяном.* — В статье рассматриваются связи художественной системы А. Сагияна с поэзией Туманяна. И для Туманяна, и для Сагияна, как для продолжателей классических традиций армянской лирики, характерно предметное восприятие и отражение мира, в основе своей имеющее, с одной стороны, эстетику природы, с другой — традиционный строй национального мышления. Очевидна общность как в мировоззрении, так и в поэтическом языке, в образности, стилистике, стихосложении и др.

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 155: